

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՆԱԽԱԿՆԵՐԸ ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

Հանգուցյալ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի արխիվը Մաշտոցի անվան Մատենադարան տեղափոխելուց հետո, այն կարգավորելիս հանդիպեցինք Ավետիք Իսահակյանի մի քանի նամակներին, որոնք նա 1916—1934 թ. ուղղել է դրող, թարգմանիչ և հասարակական գործիչ Կարեն Սարգսի Միքայելյանին (1883—1941)։

Նամակները արժեքավոր նյութ են պարունակում գաղութաճայության, իրեն՝ Ա. Իսահակյանի կյանքի, գրական գործունեության և այլ հարցերի մասին։

Հրապարակվող նամակների բնագրերը գտնվում են Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առնվելը Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում (ԵՄաՄԻՆԱԴԱՐԱՆ), Աշոտ Հովհաննիսյանի արխիվում, № 244/21 թղթապանակում (վավերագրեր 59—67)։

Նամակները տպագրվում են որոշ կրճատումներով, որոնք նշված են ուղղանկյուն փակագծերի մեջ տրված բաղմակետերով [...]:

Ա. Հ. ԱԴԱՄՅԱՆ.

1

12 օգոստոսի 1916 թ.
Ժընև

Սիրելի Կարեն,

Անշափ ուրախացա, երբ հանկարծ նամակդ ստացա. ես ինձ բոլորովին մոռացված էի կարծում այս դաժան, մարդակուլ օրերում... Եվ մեկ էլ քեզ զգում ես «Խաղաղության հեքիաթական օրերում», երբ ընկերներ կային, մարդկային լզացումներ ու գնահատումներ։ Օ՜հ, ի՞նչ ժամանակներ են ներկայումս, ավելի վատ, քան երբևէ եղել է այս թշվառ երկրագնդի վրա, որի անունը այսուհետ «արյունագունդ» պիտի կոչել, ոչինչ ավելի։

Սիրելիս, նամակդ վաղուց է, որ ստացել եմ, սակայն սպասում էի, որ փողն (200 ռուբլ) ստանալի, ապա մեկ անգամից պատասխանեի, սակայն տեսնելով, որ մինչև օրս փողը չեկավ, գրում եմ, որ դու հանգստանաս, որ նամակդ հասել է։

Ամենից առաջ խորին շնորհակալություն քեզ, Պողոսին և Վահանին¹, որ ինձ չեք մոռանում, իսկապես դրությունս վատ է, շա՛տ վատ, ամեն կողմից՝ հոգեպես շատ ընկճված՝ հանդեպ այն ահավոր, անհուն կորուստների, որոնք մեր ժողովրդի մայրը լացացրին, ուրիշ ի՞նչ հոգեբանություն կարելի էր ունենալ, դրա վրա ավելացրու սիրածս եղբոր որդու անմոռանալի կորուստը, որ բոլորովին երիտասարդ ընկավ Երզրումի պատերի տակ²[...]։ Գալով անձնականին— շատ հիվանդ էի (երիկամաբային), հիմա լավ եմ, բայց դեռ պիտի հսկեմ, որ եթե նշաններ ծագեն՝ նորից բժշկվեմ։ Փող... գիտե՞ս հո այդ միշտ

պակասում էր ինձ, իսկ պատերազմի ժամանակ, ինքնին հասկանալի է, ընկած կուրս, թանգ ապրուստ և այլն և այլն, սակայն պետք է դիմանալ — ահա այդ տեղ { է } մարդու և հատկապես հայի արժեքը, և ես դիմանում եմ, զգալով ինձ նույնպես տրանշենների մեջ:

Կովկասի թերթերը կանոնավոր չի ստացվում, սակայն բավական տեղյակ եմ անցուդարձին, նույնպես ձեր ժողովածուների շուրջը ծագած անմիտ իրարանցումին, բանն այն է, որ ես միմյանց սպանելու շափ թշնամի եմ Մ. Վարանդյանին «Հորիզոնի» խմբագրի և Ա. Ահարոնյանին, փոխադարձաբար, և հետևապես դաշնակցության կեսի հետ, եթե չլինեին այն մի քանի ընկերները, որոնց հետ գործել եմ ու ոգևորվել, և այն կովոդ տղերքը, որոնց շատ եմ սիրում, վաղուց էի հեռացել այս կուսակցությունից, զգացումներս և մտածողություններս շատ են տարբերվել դրանից, թեև նա էլ՝ դաշնակցությունը որոշ, խիստ բան չի ներկայացնում, ամեն միտք և ամեն զգացմունք կան նրա ծոցում: Եվ վերջապես սրանից հետո՝ այս բնաշնչումից հետո, էլ ի՞նչ դաշնակցություն, էլ ի՞նչ բան, նոր ուղի է պետք, եղածները բոլորը անպետքացան, ո՞վ կարող է նոր ուղի գտնել. Կրուպի թնդանոթները ամեն բան «Տաբուլա Ռազա» արեցին: Ո՞վ պիտի տա նոր արժեքներ, որոնցով մի առ ժամ նորից խաբվի անասնացած մարդկությունը:

Հա, այդ Մ. Վարանդյանի փրփուրն է կատաղության, որ թափվել է Ձեր վրա, ի՞նչպես Րսահայկյանը հայերի առջև բարձրաձայն ուրիշներից գովված՝ այդ անմարսելի է. ուրեմն հայհոյել, և ի՞նչ է դուրս դալիս. «Հորիզոն» ինձ հակառակ, «Մշակն» ինձ հակառակ, իսկ ես վաղուց եմ թքած դրանց վրա. դրանք ոչինչ, ավելի քան ոչինչ, միայն թե այս պատերազմը վերջանար, և կյանքի հին ընթացքը գար, և մենք կարող լինեինք նորից ապրել, վերաշինել, ստեղծել:

Հիմա ես գրեթե բան չեմ գրում, այսպիսի տրամադրությունաբ բան չի կռելի գրել, միայն կարդում եմ, շատ եմ կարդում, հետո՝ հին գրածներս սրբագրում եմ, այս էլ իմացիր, որ բոլոր ձեռագրերս մնացին Բերլին, իրավունք չկար դուրս բերել, շատ նոր բաներ ունեի, կմշակեի, մանավանդ վեպս (Ուստա Կարոն) կարող էի վերջնականապես գրած համարել. բայց գերի մնացին, պահ տվի մի բարեկամի մոտ և եկա: Եթե մի փոքր տրամադրությունս լավանա, կարող եմ բաներ գրել, մտքեր, պատկերներ շատ կան գլխումս:

Դուք ի՞նչ եք անում, Վահանը, Պողոսը ինչ գործի են, ո՞ւր են, ինչո՞վ են պարապում:

Մի՞թե «Գարունը»³ հրատարակելու ժամանակն է, լավ չի լինի որ սպասեք խաղաղությունը գա, հետո:

Մի՞թե Մ. Գորկու ժողովածուի մեջ ինձնից կտորներ կան⁴, ոնց անենք, որ մի օրինակ ստանանք:

Խնդրում եմ, որ փողը (նամակներդ, գիրքդ իմ անունով) ուղարկեք, եթե մինչև հիմա չեք ուղարկել, հետևյալ հասցեով Avedis Bejāzid—Avenue Beau Sejour, 3.— պաշտոնական հասցես նա է, թեև իմ անունով էլ կարելի է ստանալ, բայց լավագույնն է: Երևի «Բանկ Ֆեդերալի» միջոցով. այսինքն դու գիտես:

է՛հ, ուրեմն մնամ ջերմ համբույրներով ու կարոտալի բարեններով քեզ, Պո-
ղոսին և Վահանին:

Ձեր Ավետիք Իսահակյան

2

18 մարտի 1917
[Ժընև]

Սիրելի Կարեն,

Նամակդ ստացա երեկ, այսօր և երեկ 10 նամակ միասին ստացա, գլուխս ոռոսական հեղաշրջման¹ կախարդական, հրեղեն լուրերով ուղղակի պայթեց, կարծես, Պետրոգրադի աշխարհաստան պայքարը, աղմուկը, փլուզումները իմ զլխումս են պատահել, իմ գանգիս տակ, սարսափելի ցավում է գլուխս... Այս քանի օր է մենք հարբած ենք— անքուն գիշերներ, շամբայն, խոսք, վեճ... Այս մեծ, անսահման ուրախության համար փոքր է սիրտս, գիտե՞ս, սիրելիս, թե վշտից, հոգսերից, անարցունք լացից սիրտս որքան էր նեղվել, շորացել, և վերջապես մեծ-Ռուսաստանի մեծ ազատության մեծ ուրախությունը... Համբույրում եմ քեզ, գրկում եմ բոլորին— բոլոր լավ մարդկանց կրծքիս և գոշում,— կեցցե՛ Ռուսաստանը, կեցցե Ռուս մարդը... Փրկվեցինք բոլորը և հայերս, որ բռնորդից դժբախտն ենք, փրկվեց թուրքահայը, որ պիտի ոչնչանար Պրոտոպոպովների և ընկ. կրոնիկների տակ:

Դու չես կարող երևակայել թե այստեղ թուրքերը, բուլղարները և գերմանացիք ի՞նչքան են տխրել, կարեկցելու չափ խեղճացել, վերջապես հնչելու է հատուցման ժամը... Միայն մի ամպ երբեմն անցնում է հոգուս վրայով— չղաճնա անիվը, չգա՞ կոնտր շարժումը, ռեակցիան: Բայց չի՛ գալու, չի՛ գալու, աշխարհը պիտի քանդել, եթե գա [...]: Դառնանք առօրիային: Ամսից ավելի է, որ ստացել եմ «Поэзия Армении»². հոյակապ գործ և հոյակապ ջանք, նմանը չունեցած, արդեն նամակ գրել եմ Մոսկ. կոմիտեին³. շնորհակալութուններս հայտնելով, միայն ցավում եմ, որ Դեմիտրիանին մեծ տեղ չեք տվել՝ նա մեծ բանաստեղծ է, սակայն բախտ չունի: Խնդրում եմ մի քանի 4—5 օրինակ ուղարկեք ինձ՝ ծախելու, շատերն են ուզում, և մի օրինակ էլ «Արձակ գրողները» Մ. Գորկու հրատարակությանը⁴:

Լոնդոնում լույս է տեսել մի շատ շքեղ գիրք հայ պոետների, պատկերազարդ, ինձ նույնպես լավ տեղ է տված⁵:

Ուզում են Բրյուսովի տեսությունը թարգմանել (Հայ Պոեզիայի մասին)՝ ֆրանսերեն լեզվով, շատ են հավանել տեղիս հայերը:

Խորին շնորհակալություններս հայտնելով պ. Բրյուսովին, ասա, որ նա հայ ժողովրդի անկեղծ և մեծ բարեկամներից մեկն է:

Գրում ես թե «Մահարին» չի համապատասխանում պատմական դեպքին. դա, սիրելիս, ես լավ գիտեմ, ինձ միայն անունն էր պետք, հնությունը, կոլորիտը և մասամբ էլ նրա պեսիմիստ-փիլիսոփա հոգին: Նրա գրածները կարդացել եմ և գերմաներեն լեզվով և ֆրանսերեն, գիտեմ, որ նա կույր է եղել, Բաղդադ չի եղել, բայց— այդ չէ կարևորը, այնտեղ ես եմ, ուրիշ ոչ ոք, միայն դա ուրիշի վերարկուի տակ: Պրոֆեսորը սխալվում է «Քասիդա, քասիդ» նշանակության մասին, նա կնշանակե Պոեմ, այդպես են վկայում բառարան-

ները, և կենդանի մարդիկ, արաբագետներ, ծանոթ եմ Ռերլին՝ նշանավոր պրոֆ. Մարտին Հարտմանին (նույնն է ասում)։ Ծանոթ եմ արաբ սենատոր և գրող էլ-Քոստանի⁶, նույնն է ասում։ «Սուրա»-ի մասին ճիշտ է, նա գործածում է Ղուքանի մեջ, և մեր «սրահ» բառն է, «սրահ» կնշանակե հերթ, կարգ, բայց ես ուզեցել եմ նոր Ղուրան գրել։ («մանիա գրանդիօզա, մեծամտություն»)։ Չէ՞ ո՞ր ասել եմ «0, ազատություն, դու դրախտային վառ բլբուլների անմահ Ալ-Կորան»։ Վրաս չծիծաղես։

Զեր խոստացած փողը չստացա, աստված հետնե՛րդ։ Առայժմ այսքան։
Բարևներով և համբույրներով՝

Ի. Ավետիֆ

Exp/A. Bayazide Rue Prevost Martin 53.

3

12 սեպ., 1924
Վենետիկ

Սիրելի Կարեն,

Մեծ ուրախությամբ ստացա քո և Սարյանի գրությունները, անմիջապես չկարողացա պատասխանել, որովհետև մի երկու օր հետո, մեկնեցի Թրիեստի կողմերը մի բարեկամի մոտ հյուր, և ամբողջ երկու շաբաթ միասին թափառեցինք բնության մեջ, նոր եմ վերադարձել և ձեռնարկել եմ ղբադմոնքներս։

Զգիտեմ ի՞նչ գրեմ, ինչո՞ւց սկսեմ, ա՛յնքան բան կա ասելու, որ անհնար է դրան մոտենալ։ անշուշտ մի օր մեծ բախտ պիտի ունենամ Հայրենիք դառնալու Մոսկվայից. և կհանձնեմ քեզ...

Մխիթարված և հպարտ եմ զգում ինձ, որ ընկերներս, դու և շատերը, այսքան դաժան, անմարդկային տարիներից հետո, կարոտել են ինձ, փափագում են ինձ տեսնել, ես էլ ուղիղն ասած՝ իմ վերադարձիս ամենալիրիկ մասն է կաղմում դա։ Դու գրում ես թե՛ շա՛տ ուրախանալու բան կա տեսնելու, անշուշտ հավատում եմ — հայ հող, հայ լեզու, հայ կուլտուրա, Շիրակի ջրանցք, մյուս բաների վրա աչք կգոցեմ, բայց ամենից անուշը ընկերներիս գրկելն է, նրանց հետ գիշերը լուսացնել ղրույցով ու քեֆով, մանավանդ թառով ու փողով (դու՝ դուկ)։

Ինձ արտասահմանը բնավ «չի կլանել» (քո խոսքն է), բնավ չեմ փոխվել, և սիրտս երիտասարդական բոլոր ավյունով բաբախում է հայության համար. հայություն, ուրիշ ոչինչ[....]։

Իմ գալը կապված է դժվարությունների հետ դեռ, որին մենակ չեմ կարող հաղթահարել, ամենից առաջ ձեռքիս տակ մի երկու գրվածքներ ունիմ, որ սիրտի ավարտեմ ղալուցս առաջ, գիտենալով, որ հայրենիքում երկար ժամանակ միջոց և հարմարություն պիտի չունենամ ղբաղվելու. հետո կինս և տղաս պիտի մնան Եվրոպայում, տղաս պիտի վերջացնե սկսած դպրոցը, հետո դրամական խնդիրներ կան, որ պիտի կարգավորել, սակայն և այնպես հույս ունիմ գարնանը մամբա ընկնելու, քանի որ մինչև գարուն հաղիվ հաջողեցնեմ այս ամենը։

Սիրելի Կարեն, լսել եմ, որ ամուսնացել ես և երկու երեխա ունիս, ապրիս: Գրո՞ւմ ես արդյոք քո պատմվածքները, որոնք հիմա ավելի խորացած պիտի լինին, մանավանդ, որ սկզբից քո տաղանդը օգտագործում էր այն տարրերը, որոնք ներկա օրերումս, Ռուսիայում, տիրողն են՝: Ձեռքս քիչ են ընկնում Հայաստանի հրատարակություններից. Չարենցին եմ միայն մասամբ ձանաչում[....]:

Նոր գրողներ չեն երևում աչքիս, գրիչ շարժողները լեզու չգիտեն, և քարոզած գաղափարները հին են և ձանձրալի, և մոռնոտն: Մի խոսքով, Աստված բարի տա բոլորին:

Շա՞տ ուրախ կլինեի, եթե մեկ-մեկ գրեիր:

Շա՞տ համբույրներով ու կարոտի բարևներով քեզ և բոլոր ինձ հիշողներին, մնամ քո

Ավետիք Իսահակյան

Հասցեդ նոր ուսերենով դրեցի, ձի՞շտ եղավ արդյոք:

A. Izsakian, 2266. Dorsadura, Venezia.

4

15 հունվարի, 1926 թ.

Վենետիկ

Սիրելի Կարեն,

Անսահման ուրախություն բերեց ինձ նամակդ: Շա՞տ զգացված եմ, որ հիշեցիր ինձ: Թերթերի միջոցով հետևում էի Ձեր առաքելության ընթացքին՝, Դրում ես, որ Ձեր առաքելությունը հույսեր ներշնչում է հաջողության մասին, բնական է, որ մեծ հաճությամբ կուզենայի հավատալ այդ խոստումներին: Մեծ գործ կատարած կլինեք եթե գաղութները կապեք հայրենիքի հետ, ցիրուցան հայերը ներշնչվեն մեր թշվառ ժողովրդի սիրով և իդեալով: Ի՞նչքան բարոյական և նյութական օգուտներ կարող է ստանալ, հիմա և ապագայում, մեր դժբախտ, աշխարհից ծեծված ու արհամարհված հայությունը:

Պետք չէ հուսահատվել, շարունակեցեք սիրով ու կարոտով Ձեր քայլը: Բոլոր հոգով ցանկանում եմ Ձեր գործին հաջողություն, բարի ձանապարհ, բարի վերադարձ:

Հարցնում ես իմ Հայաստան դառնալու մասին: Վճռել եմ վերադառնալ, չգիտեմ լավ քսյլ է արածս, թե վատ,— բայց պիտի դառնամ: Թեև առջև կան շատ դժվարություններ պատնեշված:

Կարոտել եմ շա՞տ հայ ժողովրդին, ընկերներին և մեր ցորենի արտերին: Բայց չգիտեմ, պիտի կարողանամ այնտեղ ապրել— ես կոմունիստ չեմ,— բայց համակրում եմ նրանց՝ հայ մեծամասնականների վարքագիծը, և հավատում եմ մեր երկրի ապագային, մեր ժողովրդի բնածին իմաստությանը, նրա առողջ բնազդին:

Կինս և երեխաս մնալու են Եվրոպայում, որովհետև երեխաս սովորում է՝ և միտք չունի նրան դպրոցից դպրոց տեղափոխել. շա՞տ կվնասվի...

Եվ վերջապես, Երևանում այնպես պիտի լինի իմ կեցվածքը, որ պատվաբեր լինի ինձ համար և վրաս մուր չքսվի: Ես ինձ վաճառել չեմ կարող...

Ձմռանամ ասել, որ անցյալ տարի, երբ դու ինձ թերթ և նամակ ուղարկեցիր Մոսկվայից, ես քեզ իսկույն պատասխանեցի, անշուշտ ստացած կլինես իր ժամանակին:

Ո՞ւր ես թողել կինդ և երեխաներդ, Մոսկվա թե՞ Երևան: Ո՞ւր ես ապրում մշտապես:

Բարեներ սրտագինս՝ Գր. Վարդանյանին և բժ. Կամսարականին², որին, եթե չեմ սխալվում, տեսել եմ 1907 թվականին Մոսկվայում, հանգուցյալ Կ. Կուսիկյանի մոտ³:

Ջերմ բարեններով և համբույրներով միշտ քո՝

Ալեկոյի Իսահակյան

5

17/5—1927 թ.

Կարեն ջան,

Այսօր ստացա նամակդ, շնորհակալություն, որ ինձ չես մոռացել: Վաղըմյուս օրը գնում եմ Թիֆլիս, գրքերս այնտեղ են տպվելու, վերադարձիցս հետո քեզ երկար նամակ կգրեմ, առայժմ ընդունիր կարոտի բարեններս և համբույրներս:

Միշտ քո Ալեկո. Իսահակյան

6

2/8—1930 թ.
Փարիս

URSS.
Moscou.
К. Микаелиян. Сверчков пер. № 10, кв. 4
Москва—центр.

Սիրելի Կարեն,

Ներողություն ուշ պատասխանելուս համար:

Հազիվ կարողացա մի որոշ բան գրելու քեզ:

Սիրելիս, անկարելի է պարտքս ուղարկել, որովհետև փող չկա: Ամենուրեք հիմա փողի կրիզ է, այնպես որ պիտի հաշտվես այդ մտքի հետ, որ փողդ չես ստանալու: Վերադարձիս կստանաս:

Ես շատ մռայլ եմ, տրամադրությունս շատ գեշ է: Գաղութահայությունը կորած բան է, ամեն մարդ իր ապրուստի հոգսով է բնաված: Պլատոնական շոնդալից խոսքեր ինչքան կուզես՝ թափվում են Հայաստանի համար, բայց ոչ մեկի ձեռքը գրպան չի գնում մի կոնկրետ գործ տեսնելու համար: Ռամկավար, բարեգործական, ՀՕԿ, Կարմիր խաչ սնամեջ անուններ են: Հույսը և ապավենը Արագածի շուրջը ապրող ու աշխատող հայ ժողովուրդն է, մնացածը

դատարկ բաներ են: Երբ կերթաս Հայաստան՝ շատ կարոտալի բարեկներ բոլորին, ընկերներին, քարին ու հողին: Բարեկներ տիկնոջդ:

Իս. Ավետիք

A. Issakian. 17 rue Denfert Rochereau Paris 5.

7

[1933 թ.]

Սիրելի ընկեր Կարեն,

Հունվարի սկզբներին ստացա նամակդ, բայց ների՛ր, որ մինչև հիմա չկա-
րողացա պատասխանել: Շա՛տ կլանված էինք Դուրյան եպիսկոպոսի սպանու-
թյան առիթով ծագած աղմուկով, հարցերով: Ամբողջ գաղութահայությունը
սաստիկ հուզված է այս տմարդի, անմիտ, զզվելի ոճիրով: Բողոքի միտինգ
կազմեցինք և այլ ժողովներ: Դաշնակցականները ծակեր մտած՝ սպառնալիք-
ներ են կարդում, բայց՝ իզուր. նրանց վախճանի վերջին գալարումներն են, որ
հայտ են գալիս: Անփառունակ վախճան:

Սիրելիս, առաջարկիդ համար ժողով ունեցանք, խմբագրությունս («ՀՅԿ»),
դտնում է, որ հողվածդ երկար է և մեր թերթի համար անհարմար, մենք հրա-
տարակում ենք կարճ հոդվածներ: Այնպես որ խնդրում ենք հակիրճ գրություն-
ներ— մեկ կամ ամենաշատը երկու հանդեսների մեջ զետեղելու համար: Կը-
խնդրենք ուղարկես պատմվածքներ, առավելությունը նրանց տալով, կամ
Մոսկվայի իրականությունից (կառուցում, ժողովներ, հարցեր, կուլտուրական-
գրական-գեղարվեստական կյանք):

Շա՛տ շնորհակալ կլինենք, եթե տաս մի հողված համամիության նշանա-
վոր դրական երկերի մասին, մանավանդ հայկական: Օրինակ, շա՛տ գովում
են Զարենցի վերջին գործը², մի՞թե լավ չէր լինի նրա մասին գրախոսելի:

Սիրելիս, ես էլ ուզում եմ Երևանում լինել, ընկերներինս մոտ, ժողովրդի-
հետ, բայց զանազան գործեր պահում են ինձ այստեղ, դուրս է գալիս, որ ան-
հրաժեշտ մարդ եմ այստեղ, իսկ այնինչ իմ մուրազս է, մի անդորր անկյուն
ունենամ և պարապեմ, գրական թերի գործերս ավարտեմ: Վախենում եմ մեռ-
նեմ և գործերս անկատար մնան: Առողջությունս գեշ չէ, բայց սիրտս թույլ է...
Զգիտեմ, հայկական բարձրավանդակի ցուրտ, խիստ օդը ի՞նչ ներգործություն
սլիտի ունենա սրտիս վրա: Եվ վերջապես երիտասարդ չեմ, ծերացա:

Որոշել եմ այս տարի, մի գյուղ քաշվեմ, վերջացնեմ գործերս և ապա վե-
րադառնամ Հայաստան: Այս ՀՅԿ և հարակից գործերը (թերթ, ժողովներ, զա-
նազան հանձնառումներ) կլանում են բոլոր օրերս և եռանդս:

Զգրեցիր թե ի՞նչ են անում Յուլակը, Պողոսը (Աբելյան), Դերենիկը, Ման-
վելյանը³: Առո՞ղջ են արդյոք, ո՞նց են ապրում:

Ի՞նչպես են ձերոնք, կինդ և երեխաներդ: Դու ինչո՞վ ես զբաղված, պաշ-
տոն ունի՞ս:

Մենք ապրում ենք մի կերպ, տղաս շատ լավ գործ ունեն (Պարամոնդ Սի-
նեմայի մեջ)⁴, բայց այս երկու ամիս է գործազուրկ է, գործ չկա: Հուլիս ունինք,
որ շուտով գործերը բացվին:

Դժվար և ծանր ժամանակների մեջ ենք ապրում. և չեմ կարծում որ շուտով բարվոքվի դրությունը. խոսքս Եվրոպայի և Ամերիկայի ծանր կրիզի մասին է:

Գաղութահայ գրականությունը գրեթե ո՛չ մի աչքի ընկնող բան չտվեց, եղածը շինծու, ֆրանսիական գրականության ազդեցությամբ հերյուրված բաներ են: Եվ ի՞նչ կարող են տալ հողից, ժողովրդից կտրված, արմատները չորացած մարդիկ[....]: Զգվելի է գաղութների մեջ կյանքը: Շա՛տ բարենեւ կնոջս կողմից և իմ կողմից Արմինե Ավետովնային⁵ և քեզ և երեխաներիդ: Բարևիր ինձ հիշողներին:

Խնդրում եմ ներփակ նամակս հանձնես ընկեր Աշոտ Հովհաննիսյանին:
Համբույրներով քո՝

Ավետիֆ Իսահակյան

Paris 5, 17 rue. Denfert Rochereau,

8

6 հունիսի 1934 թ.

Roissy

Սարելի Կարեն,

Նամակդ վաղուց է ստացել եմ, ներողություն, որ ուշ եմ պատասխանում: Պատմվածքդ կտպվի մոտակա թվերի մեջ: Մինչև հիմա «ՀՕԿի» Բ. տարվա 4-րդ թիվը¹ լույս է տեսել, զարմանում եմ, որ քեզ չի ուղարկված: Կստանաս:

Ես ամսից ավելի է գյուղումն եմ ապրում, շա՛տ ջղային էի դարձել և սիրտս անհանգիստ էր, բժիշկս գյուղ ուղարկեց, հիմա լավ եմ, և կմնամ դեռ էլի մի ամիս կամ ավելի: Փարիզը շա՛տ ապառողջ քաղաք է:

Վերադարձս զանազան պատճառներով հետաձգվում է: Մնաց մյուս տարվան: «Поззия Армении» բ. հրատարակությունը լավ միտք է, անշուշտ լավ կանես Սայաթ-Նովայից շա՛տ դնել, ինչպես և Վ. Տերյանից, Դ. Դեմիրճյանից, թուրքահայ բանաստեղծներից և նորերից (Գ. Մահարի), Զարենցի «Ես իմ անուշ Հայաստան[ի]...» անպատճառ դրեք, և նրա հին լիրիկայից մի քանի ընտիրները [....]: Ես իմ մասին ոչ մի առաջարկ չունիմ, բացի այս խնդրից, շատ կուզենայի նորերիցս ղետեղել այս ոտանավորս՝

«Արարատի ծեր կատարին

Իար է եկել վայրկյանի պես

և անցել»...

Գիրքս ունիս, խորագիրն է «Թավեննայում»:

Հին հրատարակության մեջ (П. Ар.)² իմ Լրկու ոտանավորները իրար են խառնած, կարծեմ «Որսկան ախպերը» մի ուրիշի հետ: Ուղղել: Թերևս նորի մեջ այդ կտորները չեն մտնելու, թերևս շա՛տ բան դուրս են նետելու: Բնավ պետքս չէ:

Զուպանյանը միջնադարյան Լրդեր, լավ, նոր բաներ չունի: Սակայն մեծ քանակությամբ Քուչակ Նահապետ ունի, որ պիտի լույս ընծայե շուտով, դիմում է արել Հայաստանին, Մելքոնյան ֆոնդին:

Գրում ես Ջարենցի «Երկիր Նաիրի» գրքի ուսերեն թարգմանության մեծ հաջողության մասին[...]:

Արտասահմանի հայ գրականությունն էլ աչքի ընկնող բան չունի: Ամեն տեղ սնանկություն:

Դու և Ա. Խանջյանը շատ գովեցիք Ջարենցի վերջին գիրքը՝ «Ճանապարհի ցիրք», ձեռքս չընկավ, երևի, թաղեցին: Նույնիսկ չի խոսվում նրա մասին: Իրոք ի՞նչ եղավ:

Ի՞նչ հալի են մեր Երևանի ընկերները — Յուլիա, Պողոսը, Միշան, Դերենիկը, գրի, բթե տեղեկություններ ունիս: Ի՞նչ մնաց Դավիթը³:

Ի՞նչ են անում երեխաներդ, լա՞վ են, լա՞վ սովորում են, ինչպե՞ս է տիկինդ: Դու թարգմանելով, գրելով կարող ե՞ս ապրել, ասում են կյանքը շա՞տ սուղ է Մոսկվայում, և հեշտ է ապրելը Торгсин-ի բօներ (վալյուտա) ունեցողների համար: Լսեցի՞ր, որ Ա. Ահարոնյանը այս 4 ամիս է, որ անդամալուծ է ընկել, ո՞չ ապրում է, ո՞չ մեռնում, գրեթե անգիտակ, անզգա, անլեզու: Սարսափելի է: Իսկ Վարանդյանը մի երկու ամիս առաջ կաթվածահար եղավ, մեռավ: Դաշնակցությունը հոգևորի մեջ է, բարոյապես, նյութապես սնանկ:

Լավ չեմ պատկերացնում թե ի՞նչ է կատարվում Երևանում, առաջ զնո՞ւմ է Թամանյանի թատրոնի շենքը, Աղասթաֆա երկաթուղին, կառուչուկի ֆաբրիկան: Սրտի անհուն ցավով կարդում եմ Սևանը դատարկելու խուլական, խենթ ծրագիրը, արժե՞ մի քանի տասնյակ հազար հեկտար հողի համար Հայաստանի չրամբարը ցամաքեցնել, կամ ավելորդ էլեկտրական ուժ ստանալու համար, որ մեզ պետք չէ, պիտի վաճառվի: Շատ մոայլ եմ և տխուր այս հարցերի առաջ[...]: Մի թիթարականը այն է, որ 50 տարի պիտի քաշե Սևանի հոգևորը...

Արաքսը հոսում է, ջրերը առատ, բայց չեն կարող թորքին համոզել, որ թույլ տա ջուր վերցնելու և Սևանն են չորացնում: Ե՛կ և դիմացիր:

Է՛հ, բավական գրեցի:

Շա՛տ բարևներ մերոնցից:

Ջերմ բարևներ հարգելի տիկնոջդ.

Համբույրներով

Ի. Ավետիք:

Հասցես Փարիզն է: Շաբաթը մի անգամ զնում եմ Փարիզ, 1/2 ժամ հեռու է:

Սիրելի Կարեն,

Քո նամակին վաղուց եմ պատասխանել, և միևնույն ժամանակ սպասում եմ շատունց բո խոստացած նոր մի գրվածքը: Առաջին ուղարկածդ, — որ հետո գրեցիր՝ չտպեմ, — պահում եմ, իսկ նորը չեկավ ու չեկավ: Թերևս նամակս ձեռքդ չի հասել. հնարավոր է, կամ տրամադրություն չունես գրելու:

Հասցեդ կորցրել եմ, այսինքն նամակդ թղթերիս մեջ սուզվել է, ուստի ընկ. Ս. Սուքիասյանի՝ հասցեով գրում եմ այս երկտողը:

Այստեղ ստացանք Գուլիվերի ճանապարհորդությունը⁶, թարգմանածդ, և դեռ չեմ կարդացել, մի քիչ թերթեցի, երևի, մի օր կկարդամ՝ մանկությունս վերապրելու համար: Խնամքով տպագրություն է: Ուրիշ ի՞նչ ես անում հիմա, ինչ գրական գործեր ունեւ՝ թարգմանական և ինքնուրույն:

Ինչ եղավ «ІІоезняя Армении» գրքի հրատարակությունը, նախկին նամակիս մեջ դրա մասին էի գրել, որովհետև հարց եք տվել ինձ:

Ես էլ ասում եմ.— արեք, ինչ ուզում եք, ինձ բնավ չի հետաքրքրում:

Երևի մտերիմ լուրեր կունենաս Երևանից, մեր ընկերների կյանքից, գրիր, տեսնենք:

Այսօր արտասահմանի լրագրերում Կարսից հեռագիր կար, որ թուրքական գիտական մի հանձնաժողով գիտական առշավանք է կատարում Անին ուսումնասիրելու (sic): Ականջը կանչե պրոֆ. Մառի: Աշխարհը լավ է հասկանում թուրք ուսումնասիրությունները, պեղումները այնպես խորունկ պիտի կատարեն, որ քար քարի վրա չմնա: Այսպիսի ուսումնասիրություններ արդեն նրանք կատարել են Մրեն, Տեկոր, Աղթամար, Ս. Կարապետ, որ ապագա ուսումնասիրողների համար այլևս նյութ չի մնացել:

Հավ կյիսի, որ պրոֆ. Մառին իմացնես այս հետաքրքիր երևույթը:

Բան չունիս՝ այլևս գրելու, և ոչ էլ տրամադրություն: Ջերմ բարևներ տիկնոջդ, երեխաներիդ, Աշոտ Հովհաննիսյանին և քեզ:

Նամակիդ սպասելով մնամ՝

Ավետ. Իսահակյան:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. Խոսքը Պողոս Մակինցյանի և Վահան Տերյանի մասին է:

2. Նկատի ունի իր եղբոր տղային՝ Իսահակ Իսահակյանին (1893—1916 թթ.), որը եղել է ուսուցիչ, բանաստեղծ, ցարական բանակի սպա. զոհվել է 1916 թ. էրզրումի ճակատամարտում: Ի. Իսահակյանից 1912 թ. հրատարակվում են «Հեթաթ արևի տակ» խորագրով արձակ բանաստեղծությունը և այլ գրվածքներ, որոնք արժանանում են Ա. Իսահակյանի և ուրիշների դրվատանքին: Ա. Իսահակյանը այն կարծիքի է, որ Ի. Իսահակյանը կարող էր լինել հայ գրականության աստղերից մեկը:

3. «Գարուն»— գրական, քննադատական ամսանախ (տարեգիրք), որը տպագրվել է Մոսկվայում 1910—1912 թթ. Պողոս Մակինցյանի և Յուլիա Խանդադյանի խմբագրությամբ:

4. Նկատի ունի 1916 թ. Մ. Գորկու խմբագրությամբ Պետրոգրադում տպագրված «Сборник армянской литературы» խորագրով ժողովածուն, որ տպագրվել են արևելահայ նշանավոր գիտնականների ու բանաստեղծների ընտիր ստեղծագործությունները:

2

1. Խոսքը 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած փետրվարյան հեղափոխության մասին է:

2. Խոսքը Վալերի Բրյուսովի խմբագրությամբ և առաջարկումով 1916 թ. Մոսկվայում տպագրված ժողովածուի մասին է, որ տեղ են գտել միջնադարից մինչև 1916 թ. հայ նշանավոր բանաստեղծների ընտիր ստեղծագործությունները:

3. Նկատի ունի «Поэзия Армении» ժողովածուի նախապատրաստման կոմիտեն, որի նախագահն է եղել Ս. Գ. Մամիկոնյանը, իսկ խմբագրական հանձնաժողովի անգամներ՝ Կարեն Միքայելյանը, Կ. Բ. Կուսիկյանը, Ա. Ծատուրյանը և Պ. Մակինցյանը:

4. Խոսքը վերաբերում է «Сборник армянской литературы» ժողովածուին:

5. Խոսքը վերաբերում է Զարել Բոյաջյանի անգլերեն թարգմանած և նրա առաջաբանով 1916 թ. լոնդոնում տպագրված «Հայկական լեզուներ և պոեմներ» պատկերազարդ գրքին, ուր տեղ են գտել Ա. Իսահակյանի հինգ բանաստեղծությունները (էջ 6, 11, 29, 30 և 42):

6. Նկատի ունի արաբ գրող, հրապարակախոս և արաբական հանրագիտարանի աշխատակից Սելիմ Ալ-Բուստանուն (1848—1884 թթ.):

7. Նամակի լուսանցքում Ա. Իսահակյանը ավելացրել է. «Թարգմանություններ հանձն առնելու համար հետո կգրեմ: Շուտ-շուտ գրիր: Թանկագին ժամեր են ընկերների նամակները ստանալու օրերը»:

3

1. Խոսքը այդ տարիներին Ռուսաստանում տարածված սիմվոլիզմ, ֆուտուրիզմ և այլ գրական հոսանքների մասին է:

4

1. 1921 թ. Երևանում հիմնադրվում է Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ)՝ նրա զբաղվող վարչության նախագահ է ընտրվում Հովհ. Թումանյանը, ապա՝ Ա. Երզնկյանը, հետո՝ Գրիգոր Վարդանյանը: ՀՕԿ-ի գլխավոր վարչությունը 1925 թ. առաջին անգամ պատգամավորություն է ուղարկում արտասահման՝ ՀՕԿ-ի նոր վարչություններ կազմակերպելու համար: Պատգամավորության մեջ է լինում նաև Կարեն Միքայելյանը: Նրանք լինում են Եվրոպայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, Բալկաններում ու Պարսկաստանում և հայկական զաղութներում կազմակերպում են ՀՕԿ-ի նոր վարչություններ:

2. Բժիշկ Կամսարական—հասարակական գործիչ, ՀՕԿ-ի գլխավոր վարչության աշխատակից Երևանում:

3. Նկատի ունի հայագետ Կարապետ Կուսիկյանին:

7

1. Խոսքը վերաբերում է Ամերիկայի հայոց թեմի հոգևոր առաջնորդ Ղևոնդ Դուրյանի սպանությանը, որը տեղի է ունեցել 1933 թ. դեկտեմբերի 24-ին Նյու-Յորքի Սուրբ Խաչ հայոց եկեղեցում, դաշնակցականների կողմից:

2. Նկատի ունի Ե. Զարենցի «Գիրք ճանապարհի» խորագրով ժողովածուն, որը տպագրվել է 1933 թ. Երևանում:

3. Խոսքը գրականագետ Յուլիա Խանզադյանի, տնտեսագետ Պողոս Աբելյանի, գրող Դերենիկ Դեմիրճյանի, դերասան և գրող Մ. Մանվելյանի մասին է:

4. Պարամոնդ Սինեմա—կինոստուդիա, ուր աշխատել է Ա. Իսահակյանի տղան՝ Վիգեն Իսահակյանը:

5. Նկատի ունի Կարեն Միքայելյանի տիկնոջը:

8

1. «ՀՕԿ» խորագրով պարբերականը 1926 թ. սկսել է հրատարակվել Կահիրեում, 1928 թ. Երևանում և 1933—1935 թթ.՝ Փարիզում: Փարիզում հրատարակվող «ՀՕԿ» պարբերականի խմբագրական աշխատանքներին մասնակցել է նաև Ա. Իսահակյանը:

2. Ակնարկում է «Поэзия Армении» ժողովածուն:

3. Խոսքը Դավիթ Անանունի մասին է:

9

1. Խոսքը գրականագետ Սաքո Սուքիասյանի մասին է:

2. Լույս է տեսել 1934 թ. Երևանում, Կարեն Միքայելյանի թարգմանությամբ, Ակսել Բակունցի ընդարձակ առաջաբանով:

ПИСЬМА АВЕТИКА ИСААКЯНА КАРЕНУ МИКАЕЛЯНУ

А. А. АДАМЯН

(Резюме)

Публикуемые письма Ав. Исаакяна, адресованные писателю Карену Микаеляну, содержат интересные сведения о жизни и литературной деятельности Исаакяна до его возвращения в Советскую Армению, а также о зарубежных армянских колониях.

Подлинники писем хранятся в Матенадаране (архив Ашота Иоаннисяна, дело № 244/21, док. № 59—67).